



# Մ ՈՒՐՐԵ Յ ԱԿՈՐ

## ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ԱՄՅՐ ԵՒ ԿԵՂԵՅԻ



### ՀՈԳԵԳԱՂՈՒՄՏԷՆ ԵՏԲ ՉՈՐՐՈՐԴ ԿԻՐԱԿԻ

28 ՅՈՒՆԻՍ 2020

Կիրակնօրեայ Ընթերցումներ	Էջ 1
Ծանուցումներ	Էջ 2

**ԸՆԹԵՐՑՈՒՄ**  
**ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ**  
 (1.21-31)

**Ի** նչպէս պոռնիկ դարձաւ Սիրոնը, հաւատարիմ քաղաքը. ան՝ որ օրինապահութեամբ լեցուն էր. ուր ատեն մը արդարներ կը բնակէին, մինչ հիմա մարդասպաններով բնակուած է: Անարժէք է արծաթը, ո՛վ Երուսաղէմ, ապօրինի շահուած, վաճառորդներդ ջուր կը խառնեն գինիին: Իշխաններդ ինծի դէմ ապստամբած՝ գողերուն գործակից դարձեր են. կաշառք կը սիրեն եւ անիրաւ նուէրներու հետամուտ են. ո՛չ որբերուն իրաւունքը կը պաշտպանեն, ո՛չ ալ այրիներուն դատը կը լսեն: Ուստի այսպէս կ'ըսէ Տէր Տիրակալը, Երկնային Զօրքերու Տէրը, Իսրայէլի Հօր Աստուածը.-

«Վա՛յ ձեզի, Իսրայէլի՛ իշխաններ, որովհետեւ բարկութիւնս պիտի թափեմ ինծի հակառակողներուն վրայ, եւ վրէժխնդրութեամբ պիտի դատեմ ինծի թշնամացողները: Ես ինքս քու մաքրութեանդ պիտի ձեռնարկեմ, եւ ինչպէս հալոցով մետաղը կը գտեն՝ այնպէս ես իմ կրակովս պիտի մաքրեմ քեզ. կորուստի պիտի մատնեմ ապստամբներդ, պիտի բնաջնջեմ բոլոր անօրէններդ, եւ բոլոր ամբարտաւանները պիտի խոնարհեցնեմ: Առաջուան ղեկավարներուդ նման ղեկավարներ պիտի կարգեմ քեզի, եւ խորհրդականներ՝ հին օրերու խորհրդականներուդ պէս. եւ այն ատեն «Արդարութեան Քաղաք» պիտի կոչուիս, պիտի կոչուիս «Մայրաքաղաք, Հաւատարիմ Սիրոն»»:

Տէրը իր ողորմութեամբ պիտի փրկէ քու գերեալ զաւակներէդ անոնք՝ որոնք իրաւունք կը պահեն եւ արդարութիւն կ'ընեն: Բայց անօրէններն ու մեղաւորները միասնաբար պիտի խորտակուին. անոնք որ Տէրը մերժեցին՝ միասնաբար պիտի

բնաջնջուին: Ամօթով պիտի մնան անոնք՝ որոնք կուռքեր քանդակեցին ու շինեցին. պիտի ամչնան անոնք որ բեւեկներն պաշտելու հաճեցան, եւ անոնք որոնք աստուածներու նուիրուած պարտէզներ փնտռեցին: Անոնք տերեւաթափ բեւեկնիի եւ անջրդի պարտէզի պէս պիտի ըլլան: Ինչպէս վուշի կեղեւները կայծէն կը բռնկին, այնպէս ալ անօրէններն ու մեղաւորները միասնաբար պիտի այրին իրենց գործերէն, եւ ո՛չ ոք պիտի կարենայ զիրենք փրկել:

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ**  
**ՀՌՈՄԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ**  
 (7.25-8.11)

**Ա** պա ուրեմն ես ինքս միտքով Աստուծոյ օրէնքին կը ծառայեմ, իսկ մարմնով՝ մեղքի օրէնքին:

Եթէ այդպէս է, կը նշանակէ թէ անոնք որ Քրիստոս Յիսուսի միացած են՝ դատապարտութեան ենթակայ չեն, քանի մարմնաւորապէս չեն ապրիր, այլ հոգեւորապէս: Որովհետեւ Հոգիին օրէնքը զիս Քրիստոս Յիսուսի միացելով կենդանացուց եւ ազատեց մեղքի եւ մահուան ենթակայութենէն: Արդարեւ, ինչ որ օրէնքը չէր կրնար ընել, մարդկային բնութեան տկար ըլլալուն պատճառով, Աստուած իրագործեց աշխարհ զրկելով իր Որդին, որ մեղքը յաղթահարելու համար մեր մեղանշական բնութիւնը իր վրայ առաւ եւ իր մարմնին մէջ դատապարտեց մեղքը, որպէսզի կարենանք լրիւ գործադրել օրէնքին արդար պահանջները: Անոնք որ միայն իրենց մարմնական պահանջներով կը ղեկավարուին, անոնց մտածելակերպը մարմնական է. մինչդեռ անոնք որ Հոգիին թելադրած ձեւով կ'ապրին, անոնց մտածելակերպը հոգեւոր է: Մարմնականը խորհիլը մահ կը պատճառէ, մինչ հոգեւորը խորհիլը՝ կեանք եւ խաղաղութիւն: Մարմնականին կառչած միտքը Աստուծոյ թշնամի է, որովհետեւ Աստուծոյ օրէնքներուն չի հնազանդիր, ո՛չ ալ կրնայ հնազանդիլ: Ահա

Թէ ինչու անոնք որ մարմնականին կը հետեւին՝ Աստուծոյ հաճելի չեն կրնար ըլլալ:

Եթէ իրապէս Աստուծոյ Հոգին ձեր մէջ կը բնակի, կը նշանակէ թէ դուք այլեւս մարմնին չէք հետեւիր, այլ հոգիին: Իսկ ով որ Քրիստոսի հոգին չունի, անոր չի՛ պատկանիր: Եթէ Քրիստոս ձեր մէջն է, թէպէտեւ ձեր մարմինները պիտի մեռնին, որովհետեւ մեղանչեցիք, սակայն Սուրբ Հոգին դարձեալ կեանք պիտի տայ ձեզի, որովհետեւ արդարացաք: Այսինքն՝ եթէ Աստուծոյ Հոգին ձեր մէջ կը բնակի, Աստուած, որ Յիսուս Քրիստոսը մեռելներէն յարուցանեց, իր Հոգիին միջոցաւ որ ձեր մէջ կը բնակի՝ պիտի կենդանացնէ նաեւ ձեր մահկանացու մարմինները:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ  
ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ  
(12.38-45)

**Ա**յն ատեն օրէնքի ուսուցիչներէն եւ փարիսեցիներէն ոմանք ըսին Յիսուսի. «Վարդապետ, կ'ուզենք որ հրաշք մը գործես»: Յիսուս անոնց պատասխանեց. «Աստուծոյ անհաւատարիմ չա՛ր սերունդ. նշան մը կ'ուզէք. բայց Յովնան մարգարէին պատահած հրաշքէն զատ ուրիշ նշան պիտի չտեսնէք: Եւ ինչպէս Յովնան երեք օր՝ ցերեկ ու գիշեր կէտ ձուկին փորին մէջ անցուց, նոյնպէս ալ մարդու Որդին երեք օր՝ ցերեկ ու գիշեր պիտի մնայ երկրի ընդերքին մէջ: Դատաստանի օրը նինուէացիները ձեզի դէմ պիտի ելլեն եւ դատապարտեն ձեզ, որովհետեւ անոնք Յովնանի քարոզութեամբ զղջացին իրենց մեղքերուն համար: Եւ ահա, Յովնանէն աւելի մեծ մէկը կայ հոս: Դարձեալ, Դատաստանի օրը հարաւի թագուհին պիտի ելլէ եւ դատապարտէ ձեզ, որովհետեւ ան իր հեռաւոր երկրէն եկաւ Սողոմոնի իմաստուն ուսուցումները լսելու համար: Եւ ահա, Սողոմոնէն աւելի մեծ մէկը կայ հոս:

«Երբ չար ոգի մը դուրս կ'ելլէ մարդու մը մէջէն, կ'երթայ եւ անջրդի վայրեր կը շրջի՝ հանգիստ տեղ մը գտնելու համար: Եւ երբ չգտնէ, ինքնիրեն կ'ըսէ. “Ելլեմ երթամ իմ տունս, ուրկէ ելայ”: Ապա կ'երթայ եւ կը բերէ իրմէ աւելի չար եօթը այլ ոգիներ, որոնց հետ ներս մտնելով՝ կը բնակի հոն, որով այդ մարդուն վերջը իր նախկին վիճակէն շատ աւելի գէշ կ'ըլլայ: Գիտցէք որ նոյնը պիտի պատահի նաեւ այս չար սերունդին»:

ԱՅԾԵԼԵՑԷ՛Ք  
ԵԿԵՂԵՑԻՈՅ  
ԴԻՄԱՏԵՏՐԻ ԷՁՐ  
ԵՒ  
ՁԵՐ ՀԱԻԱՆՈՒԹԻՒՆ  
յԱՅՏԵՑԷ՛Ք (like).

[www.facebook.com/  
SourpHagopChurch-  
Montreal](http://www.facebook.com/SourpHagopChurch-Montreal)

ԱՅԾԵԼԵՑԷ՛Ք ԱՁԵ  
Ս. ՅԱՍՐ  
ԱՌԱՁԱՆՈՂԱՆՈՍ  
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ  
ԿԱՅԷՁՐ՝  
[www.sourphagop.net](http://www.sourphagop.net)

ԹԵՐԹԻԿԻ ԱՂՆՈՂ ԹԻԷՐՆ  
ԿՐԱՔ ԳՏԵԼ  
[www.sourphagop.net](http://www.sourphagop.net)  
ԿԱՅԷՁԻՆ ԿՐԱՅ

ՀՈԳԵՀԱՆԳԱՏԵԱՆ  
ՁԵՐ ԱՌՁԱՆԳՐՈՒԹԻՒՆԵՐՆ  
ԱՂՆՈՐՕՔ ԿԱՏԱՐԵՑԷ՛Ք ԿՂՈՒԻԼՈՎ  
ԵԿԵՂԵՑԻՈՅ ԴԻՒԱՆԱՏՈՒՆ: